ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԻԼԻԿԻԱՅՈՒՄ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

ԳԱՍՊԱՐՅԱՆ Ռ. Հ.

1880-1890-ական թթ. պատմության ասպարեզ իջան հայ ազգային կուսակցությունները: Դա պայմանավորված էր թուրքական կառավարության կողմից բռնությունների և հայահալած քաղաքականության ուժեղացմամբ, ֆիզիկական ոչնչացման վտանգով, երբ ժողովուրդը հարկադրված էր զենքի դիմելու, զենքով կռելու իր ազատությունը: Համոզվելով մեծ տերությունների միջամտությամբ և օգնությամբ ազատագրվելու ծրագրի սնանկության մեջ՝ հայ հասարակությունը սկսեց ինքնուրույն ելք որոնել ստեղծված իրավիճակից՝ բնականորեն հանգելով զինված պայքարի գաղափարին: Դրա իրականացման ճանապարհին էլ առաջացավ կուսակցությունների ձևավորման հրամայականը՝ ինքնավարությունից պետականություն կերտելու մտայնությամբ:

Համաժողովրդական պայքարը ղեկավարելու, կազմակերպված հունի մեջ դնելու նպատակով էլ առաջացան հայ ազգային կուսակցությունները: «Պատահական չէ, որ ժողովուրդը փարվեց կուսակցություններին, նրանց մեջ գտնելով իր գոյատևման միակ հույսը, և վերջիններս հզորացան, ուսանողական խմբակներից մարտական ուժի վերածվեցին միմիայն հզոր համազգային աջակցության շնորհիվ»,- նշել է Լ. Մկրտչյանը[1]: Կուսակցությունների պայքարի ասպարեզը Օսմանյան կայսրությունն էր, նպատակը՝ արևմտահայության ազատագրումը թուրքական անագորույն լծից: Առաջնահերթ խնդիրը Թուրքիայի կազմում ինքնավարության ձեռքբերումն էր, արևմտահայության վիճակի բարելավումը: Պայքարի ընթացքում ձևավորվեց նաև անկախ պետականության վերակերտման գաղափարը: Ս.Դ. Հնչակյան կուսակցությունը մոտակա խնդիր էր հռչակում «...թուրքաց Հայաստանում ձեռք բերել ընդարձակ ռամկապետական, քաղաքական ազատություն և ազգային անկախություն», որը սկիզբն էր հեռավոր նպատակին՝ սոցիալիզմին հասնելու համար[2]: ՀՅ Դաշնակցության «մշակող ծրագրին մէջ իբրև նպատակ ընդունուեցաւ ժողովուրդի տնտեսական և քաղաքական ազատութիւնը»[33], հանուն որի պետք էր մարտի մեջ մտնել ազգովին, կանգ չառնել զոհողությունների առաջ, հասնել «ապագա ազատ Հայաստանում իշխող ռամկավարական» սահմանադրության հաստատմանը, վստահ լինել հաղթանակին. «Երբ ժողովուրդը միացած է և պատրաստ կռուելու, ոգեւորված միեւնոյն վեհ զգացմունքով - այլ

[1] **Մկրտչյան Լ.**, *Արևմտահայության ցեղասպանության աբդուլհամիդյան քաղաքականությունը [Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ), Ե., 2001, էջ 67]:*

[2] *Պատմութիւն Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան, հ. Ա, Պէյրութ, 1962, էջ 33:*

[3] **Վարանդեան Մ.**, *Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Ե., 1992, էջ 59:*

ևս ոչինչ չարժէ ոչ թշնամու զօրաբանակը, ոչ թնդանօթը և ոչ օտարի պաշտպանութիւնը»[4]: Հայ քաղաքական շրջանակները, ազգային կուսակցությունները մեծ հույս և հավատ էին տածում Եվրոպայի օգնության նկատմամբ, սակայն, ինչպես նկատել էր Կ. Պոլսի հայոց պատրիարք Մ. Օրմանյանը, «Մինչև որ հայտնապես չցուցվի կամ չտեսնվի, որ եվրոպական տերությունները Հայաստան մը կազմելու կամ Հայաստան բարվոքելու մեջ իրենց օգուտն ունին, ոչ խոսքերնուն հնար է հավատալ և ոչ ալ խոստումներուն վստահիլ: Ահա իմ փորձառական հավատքի առաջին կետը»[5]:

ՀՅ Դաշնակցությունը Կիլիկիայում կուսակցական կառույցներ ստեղծելու և իր գաղափարական ազդեցությունը տարածելու առաջին քայլերը ձեռնարկել էր 1890-ական թթ. կեսերից՝ Զեյթունի ապստամբության օրերից, նպատակ հետապնդելով Կիլիկիայի լեռնային շրջանների հայության, մասնավորապես զեյթունցիների ազատաբաղձ ոգին օգտագործել երկրամասում ապստամբության բարձրացման համար:

ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովը (1898 թ. ապրիլ-հուլիս), հաշվի առնելով մի շարք հանգամանքներ՝ պայքարի փորձը, երկրի ուժասպառ վիճակը, ծանր կորուստները, որոշեց հրաժարվել հարձակողական մարտավարությունից և լծվել համաժողովրդական ապստամբության նախապատրաստման երկարատև աշխատանքին: Ընդհանուր ժողովն ընդունեց «ուժերու կեդրոնացումը Երկրին մէջ, ցոյցը Կ. Պոլիս և ծովեզրեայ քաղաքներ եւ մերժելով ֆէտայական ասպատակային գործունեութիւնը՝ ընդունեց մարտական-զինամարզական խումբեր կազմակերպելու ծրագիրը»[6]:

Հարկ է նշել, որ «տասնեակ տարիների ընթացքում գործադրած անընդհատ դառնագին աշխատանքով» ապստամբության բարձրացման որոշում ընդունվել էր նաև 1895 թ. սկզբին կայացած «շրջանային» ժողովում[7]: Սակայն այդ տարիներին, ապստամբության նախապատրաստման հետ մեկտեղ, ՀՅԴ-ն որդեգրել էր նաև առանձին կամ մի քանի վայրերում միաժամանակյա հարվածների մարտավարությունը՝ հուսալով դրանով հայ ազատագրական պայքարի վրա հրավիրել Եվրոպայի ուշադրությունը և միջամտությունը, կանխել ջարդերը, հասնել բարենորոգումների իրականացման:

ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովը ուժերի կենտրոնացման և ապրստամբության նախապատրաստման շրջաններ է ընտրում Տարոն-Սասունը (Բարձրավանդակ) և Կիլիկիան (Լեռնավայր)[8]: Ինչպես նշել է Մ. Վարանդյանը, Ընդհանուր ժողովը «աչքի առաջ ունենալով Լեռնավայրի անառիկ դիրքը, տեղական ժողովուրդի յեղափոխական ոյժը և ընդհանրապէս միւս յարմարութիւններն ու առաւելութիւ-

---

[4] *Նույն տեղում, էջ 75:*

[5] **Համբարյան Ա.**, *Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990, էջ 19:*

[6] *Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Բ, հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց* **Հրաչ Տասնապետեան,** *Պեյրութ, 1985, էջ 58-59:*

[7] *Նույն տեղում, էջ 19-20:*

[8] *Նույն տեղում, էջ 112:*

ները, որոշեց լուրջ ուշադրութիւն դարձնել այդ կէտի վրայ և այնտեղ ուղարկել կազմակերպող-ղեկավարող մի ուժ»: Ավելի ուշ Ընդհանուր ժողովը որոշում է Կիլիկիան ընդունել «որպէս Սասնոյ համարժէք կեդրոնացման վայր» և այնտեղ աշխատանքներ ծավալելու, ազատագրական շարժումները ղեկավարելու համար տրամադրել համապատասխան ֆինանսներ, ապա, անդամությամբ Հրաչի (նաև Սեպուհ, Ֆարհատ, Հրայր Թիրաքյան, որը մասնակցել էր օսմանյան բանկի գրավմանը), Մարի (Միքայել Տեր Մարտիրոսյան) և Արբակի (Հովսեփ Միրզայան) կազմվում է Կիլիկիո Պատասխանատու մարմինը[9]: Նշենք, որ Պատասխանատու մարմինները ստեղծվել էին Ընդհանուր ժողովի որոշմամբ՝ ուժերի կենտրոնացման երկու վայրերում աշխատանքները կազմակերպելու և ղեկավարելու համար: Որոշվել էր նաև, որ անհրաժեշտության դեպքում ՀՅԴ Ամերիկայի կազմակերպությունը կարող է նշանակել Պատասխանատու մարմնի ևս մեկ անդամ: Լեռնավայրի նորընտիր Պատասխանատու մարմնի նստավայր է դառնում Եգիպտոսի Ալեքսանդրիա քաղաքը: Այստեղ շուտով հաստատվում է Հրայր Թիրաքյանը, իսկ Արբակը հրաժարվում է անդամակցել Պատասխանատու մարմնին: Մինչդեռ Հրաչը 1899 թ. մարտի 3-ին Մարտին Մուրադյանին գրած նամակում խիստ կարևորում էր Արբակի մուտքը Կիլիկիա, քանզի վերջինս, ունենալով պարսկական անձնագիր, տիրապետելով պարսկերենին, կարող էր ներկայանալ որպես պարսիկ առևտրական և գործել համեմատաբար ազատ պայմաններում[10]: Իր հերթին Քր. Միքայելյանը 1898 թ. օգոստոսի 15-ին Կիլիկիո Պատասխանատու մարմնին գրած նամակում կարևորում էր բոլոր անդամների մուտքը Կիլիկիա՝ «խոշոր ձեռնարկի մը իրագործման պատասխանատուութիւնը Երկրի որոշ շրջանի մէջ» ստանձնելու և կազմակերպելու համար[11]:

Կուսակցական-կազմակերպական առումով Լեռնավայրն ընդգրկում էր ոչ միայն բուն Կիլիկիան, այլև Անտիոքը, Ուրֆան, Մալաթիան, Խարբերդը, Սեբաստիան, Կեսարիան, Հյուսիսային Սիրիան, Լիբանանի լեռնային շրջանները, չնայած հիմնական աշխատանքները տարվում էին Կիլիկիայում, Բեյրութում և Հալեպում: Ամեն դեպքում, ինչպես նշել է Գ. Խուդինյանը՝ «1890-ականների առաջին կեսին ՀՅԴ-ն իր կազմակերպական ընդարձակ ցանցը ձևավորեց Օսմանյան կայսրության մայրաքաղաքում և թափանցեց Փոքր Ասիայի գրեթե բոլոր հայաշատ քաղաքները»[12]: Արբակի հրաժարումից հետո Դաշնակցության Կամքը Ներկայացնող Մարմնի կողմից Կիլիկիո Պատասխանատու մարմնի անդամ է նշանակվում Արևմտյան բյուրոյի անդամ Բորիսը (Սմբատ Խաչատրյան), որի հետ անմիջապես կապ է հաստատում Վահրամը (Հովհաննես Գալֆայան, Կիլիկիայի ՀՅԴ առաջին գործիչներից), սակայն որոշ ժամանակ անց Բո-

---

[9] **Վարանդեան Մ.**, *նշվ. աշխ., էջ 459-460:*

[10] *Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Ա, ա. թ., էջ 37:*

[11] **Քրիստափոր Միքայէլեանի** *նամականի, խմբագիր՝* **Հրաչ Տասնապետեան,** *Պէյրութ, 1993, էջ 43-45:*

[12] **Խուդինյան Գ.**, *Հ. Յ. Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Ե., 2006:*

րիսը հրաժարվում է Պատասխանատու մարմնի անդամակցությունից և հեռանում է հեղափոխական, ազատագրական պայքարից[13]: Հարկ է նշել, որ ՀՅԴ-ն Կիլիկիային ուշադրություն դարձրել և այնտեղ որոշակի աշխատանքներ սկսել էր ծավալել դեռևս 1895-1896 թթ.: «Հ.Յ.Դաշնակցութեան վարիչները,- գրում է Մ. Վարանդյանը,- չէին կարող անտեսել այդ հարուստ երկրամասի աշխարհագրական դիրքը, որ մեծամեծ առաւելութիւններ կ՚ընձեռէր ապըստամբական ձեռնարկելու համար: Անոնք գիտէին, թէ ո՛րքան համեմատաբար դիւրին էր այդ վայրերուն մէջ դուրսէն ներս մտցնել զէնք ու ռազմամթերք, շնորհիւ ծովի ու Եւրոպայի մերձաւորութեան և թէ ո՛րքան արագութեամբ արձագանգ կը գտնէին Եւրոպայի մէջ Զէյթուն ու այլուր կատարուած դէպքերը»[14]:

ՀՅԴ մի շարք գործիչներ՝ Արմեն Գարոն (Գարեգին Փաստրմաճյան), Մարը, Աշոտ Մարտինը (Մարտին Մուրադյան), Գրիգոր Ներսեսյանը և այլք, 1895-1896 թթ., հաստատվելով Կիպրոսում և Ալեքսանդրիայում, «Դրոշակի» խմբագրության և Կ. Պոլսի Կենտրոնական կոմիտեի հանձնարարությամբ սկսեցին ուսումնասիրել Կիլի-կիայում գործելու հնարավորության հարցը: 1895 թ. վերջերին՝ Զեյթունի ապստամբության օրերին, նրանք իրենց օգնությունն են առաջարկում հնչակյաններին, սակայն մերժվում են: «Մարդիկ, տխուր մրցակցութեան տենդով բռնուած, մենաշնորհ ըրեր էին ե՛ւ Կիլիկիան, ե՛ւ Փոքր Հայքը և չէին ուզեր որեւէ ուրիշ յեղափոխական մարմին մը տեսնել այդ վայրերուն մէջ…»[15]: Ավելին, Հնչակյան կուսակցության անդամ Ֆարհատի պնդմամբ՝ դաշնակցականների նպատակը Կիլիկիայում հնչակյանների ուժի, ազդեցության, քաղաքական կշռի, տեղափոխած զենքի քանակի ճշտումն էր[16]:

1896 թ. ՀՅԴ-ի կողմից Լեռնավայրի գործիչ էր նշանակվել Քաջբերունին, որը 1897 թ., փորձելով անցնել Կիլիկիա, ձերբակալվել էր Ալեքսանդրեթում[17]: Կիպրոսից՝ Լարնաքայից, ՀՅԴ նախապատրաստվող 2-րդ ընդհանուր ժողովին գրած նամակում (1897 թ. դեկտեմբերի 11) Մարը և Հրաչը, հիմնավորելով Կիլիկիան կենտրոնացման վայր ընտրելու կարևորությունը, գրում էին, որ երկրամասը կտրված չէ արտաքին աշխարհից, մոտ է Եվրոպային՝ դրանից բխող բոլոր հետևանքներով, իսկ Ռուսաստանն էլ «չպիտի հակառակի, եթե հայերը յաջողին այդ երկրի մէջ ինքնավարութիւն ձեռք բերել»[18]: 1897 թ. հուլիսին Կիպրոս էր անցել դաշնակցական Ա. Թաթոսյանը, որը գործում էր մեծ եռանդով, նվիրվածությամբ, իրեն դրսևորելով որպես «լուրջ երիտասարդ»՝ հաջողություններ գրանցե-

---

[13] **Տասնապետեան Հ.**, *Պատմութիւն Հայ Յեղափոխական Շարժման եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Լիբանան, 2009, էջ 326-331:*

[14] **Վարանդեան Մ.**, *նշվ. աշխ., էջ 458-459: Տե՛ս նաև* **Տասնապետեան Հ.**, *նշվ. աշխ., էջ 233:*

[15] *Նույն տեղում, էջ 464:*

[16] *Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 453, ց. 1, գ. 232, թ. 4-5:*

[17] **Տասնապետեան Հ.**, *նշվ. աշխ. էջ 321:*

[18] *Նույն տեղում, էջ 330:*

լով քարոզչության բնագավառում: Համաձայն հնչակյան Ֆարհատի տեղեկության՝ նրա խնդիրը Կիլիկիա զենք փոխադրելն էր, որը և վերջինս, ըստ լուրերի, հաջողությամբ իրականացրել էր: Զարմանալի չէ, որ Հնչակյան կուսակցության 1896-1897 թթ. հարաբերական անգործության պայմաններում (որը պայմանավորված էր նաև Կիլիկիայում և այլուր Օսմանյան Թուրքիայում ձերբակալությունների վերջին ալիքով) Ֆարհատը բարձր էր գնահատում ՀՅԴ գործունեությունը. «Վերջապէս դաշնակցականները ինչ որ ալ ընեն իրավունք ունին. այսօր իրենք կը փառավորվին և հաջողութիւններով կը գործեն, ինչպես առաջ մենք»[19]: Հայերի՝ Կիլիկիա զենք փոխադրելու մասին հաղորդագրություններ էին հրապարակել հունական թերթերը: Դա անմիջապես ժխտեցին հնչակյանները:

«Իմ կարծիքով,- գրում էր Ֆարհատը Ապահ Պետրոսյանին,- ինչպէս կերեւի՝ յոյները կուզեն թուրքին ուշադրութիւնը հրավիրել Կիլիկիոյ վրայ, ապագա ապստամբութեան մը կասկածը ներշնչելով անոր որ իրենց փափաքած հաշտութիւնը ստիպեալ կնքէ սուլթանը, վախնալով հետզհետէ ծագելիք ներքին երկպառակութիւններէն»[20]:

Իրոք, 1897 թ. ամռանը և աշնանը Կիպրոսում գտնվող ՀՅԴ անդամները (Մարը, Հրաչը, Վահագն Տաթևյանը, նախկին հնչակյան Մխո Շահենը (Մխիթար Սեֆերյան) և այլք) աշխատանքներ էին իրականացնում Աթենքից Կիպրոս և Կիլիկիա զենք փոխադրելու ուղղությամբ: Կազմակերպական հարցերը հանձնարարվել էին Ալեքսանդրիայում գտնվող Վահանին (Նիկոլ Մատինյան): «Ծրագրուած էր խմբով և զինուած Մերսինի եւ Տաւրոսի շղթայով Զէյթուն անցնիլ: Մեր զէնքերէն տասնի չափ 2 սնտուկով Կիպրոսի նավահանգըստին մեջ անգլիական մաքսատան կողմէ բռնուեցան: Զէնքերը բռնուելով, մեր ծրագիրը ինքնին վիժեցաւ»:[21] Վահանը 40 ոսկի «երաշխաւորագին տալով» խուսափել էր բանտարկությունից[22]: Այդ մասին Ապահ Պետրոսյանին հղած նամակում հաղորդում էր նաև ՍԴՀԿ անդամ Ղևոնդ Շահմիրը. «Առավոտ հոս հասաւ կիլիկեցի ընկեր պ. Սեդրակը, իւր հետ բերելով Վահան անունով դաշնակցական երիտասարդ մը, որ ամբաստանուած էր զէնքերը փախցուցած ըլլալու յանցանքով: Կառավարութեան տված վճիռը իրենց խիստ ծանր գալուն պատճառով, մեղմացնելու նպատակով եկած են պ. Սվազըլեանին (ՍԴՀԿ հայտնի գործիչներից և Վերակազմյալ հնչակյան կուսակցության հիմնադիրներից - Ռ. Գ.) խորհուրդը հարցնելու»[23]:

1897 թ. Կիլիկիայում գործում էր ՀՅԴ անդամ Հատիկը (Հատիկյան Մկրտիչ՝ հայտնի նաև Պոնտացի կեղծանունով): Նա «Կիլիկիա մտած դաշնակցական առաջին աչքի զարնող գործիչն է, ղրկուած Կովկասի Ռայոնական Ժողովի որոշման հիման վրա՝ Արեւելեան

---

[19] *ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 59, թ. 4-7:*

[20] ***Նույն տեղում, ց. 1, գ. 86, թ. 17:***

[21] **Տասնապետեան Հ.**, *նշվ. աշխ., էջ 325:*

[22] *Նույն տեղում, էջ 313:*

[23] *ՀԱԱ, ֆ. 453, ց. 1, գ. 86, թ. 35:*

Բիւրոյի կողմէ, Լեռնավայրը ուսումնասիրելու առաքելութեամբ»,- գրել է Հ. Տասնապետյանը[24]:

Հատիկը 1898 թ. հունվարին անցնում է Կիպրոս՝ Մար-Շիմոնի և Հրաչի հետ կազմակերպական բնույթի մի շարք խնդիրներ քննարկելու նպատակով: Որոշվում է՝ Մարը պետք է հաստատվի Կիլիկիայում, ստանձնի կազմակերպական աշխատանքների ողջ պատասխանատվությունը, իսկ Հրաչը, մնալով Կիպրոսում, ապահովելու էր կապը «Դրոշակի» խմբագրության և Արևմտյան բյուրոյի հետ:

Մարը 1898 թ. նոյեմբերի վերջերին բուլղարական անձնագրով անցնում է Կիլիկիա, որպես «գրամոֆոն նվագող» լինում է Հալեպում, Քիլիսում, Այնթապում, ձեռնարկում կուսակցական կառույցների ստեղծման աշխատանքների[25]: Նրա հետ կամ փոքր-ինչ ուշ, Ալեքսանդրեթ նավահանգստով վերստին Կիլիկիա էր անցել Հա- տիկը՝ գործելով Մերսինում և Ադանայում՝ հիմնելով Ադանայի «Բազե» կոմիտեությունը[26]: Ծանոթանալով ընդհանուր դրությանը, տեսնելով, որ գործը, փաստորեն, սաղմնավորման փուլում է, Մարն աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ էր համարում առնվազն 10.000 ռուբլու տրամադրումը Կիլիկիո Պատասխանատու մարմնին: Այդ կապակցությամբ Քր. Միքայելյանը գրում էր. «Չնայելով Լեռնավայրի ձեռնարկութեան բոլոր նպատակայարմարութեան՝ սակայն համաձայն վերջին Ընդհ. ժողովի ցանկութեան՝ Ապրոյի գերեզմանը (Սասունը - Ռ. Գ.) ներսի գործունէութեան մէջ բռնում է առաջնակարգ տեղը, իսկ Լեռնավայրի հետ կապուած է Քարաժայռի (Դերսիմի կուսակցական ծածկանունն է - Ռ. Գ.) խնդիրը: Այսպիսով բնականաբար՝ երբ միաժամանակ մենք չենք կարող տասնեակ հազարներ ունենալ մեր տրամադրութեան տակ՝ պիտի շրջահայեաց լինենք մի կամ միւս տեղի գործը չքանդել մի երրորդ կետի համար»[27]: Չի կարելի չհամաձայնել Քր. Միքայելյանի կարծիքին, որ «Ամէն բան պիտի բնական զարգանա առհասարակ և նամանավանդ մեր գործում, որը իբր մի թոյլ, աննշան տարրի կռիւ զորեղ թշմանու դէմ, հիմնուած է գլխավորապէս բարոյական հիմքերի վրայ, կապալական սկզբունքներ մտցնել այսպիսի գործերում – միանգամայն վնասակար է և նոյն իսկ սխալ հաշիւ»:[28] Անհրաժեշտ էր ոգի ներարկել ժողովրդին, արթնացնել ազգային ինքնագիտակցությունը, սերմանել ազատագրական գաղափարներ, ապա նոր, պարարտ հողի առկայության պայմաններում, հատկացնել գումար զինման և ապստամբության նախապատրաստման համար: Իսկ Մարի այն հիմնավորմանը, որ դրամն անհրաժեշտ է ուժի ցուցադրման համար, ի պատասխան՝ Քր. Միքայելյանը Կիլիկիո Պատասխանատու մարմնին հղած նամակում հեգնանքով հարցնում էր. «Բայց ինչպէս հասկանալ ուժ ցոյց տալու խնդիրը. պիտի գրպաններիցդ դրամ հանեք ամէն մեկին ցոյց տալու համար ձեր դրամը, թէ ի՞նչ»:

[24] **Տասնապետեան Հ.**, *նշվ. աշխ., էջ 330:*
[25] *ՀԱԱ, Ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 33:*
[26] **Տասնապետեան Հ.**, *նշվ. աշխ., էջ 332:*
[27] **Քրիստափոր Միքայէլեանի** *նամականի, էջ 48:*
[28] *Նույն տեղում:*

Ըստ նրա՝ գումար հիմնականում հարկավոր է զենք և զինամթերք ձեռք բերելու համար, որը կարող են իրականացնել ՀՅԴ եվրոպական կառույցները և փոխադրել Կիլիկիա[29]: Հրաչ Թիրաքյանին հղված նամակում, ըստ նրա, նպատակահարմար էր Լեռնավայրի կարիքների համար անհրաժեշտ ռազմամթերքի փոխադրումը կազմակերպել Բուլղարիայի ՀՅԴ գաղտնի զինապահեստից[30]:

Լեռնավայրի ֆինանսական օժանդակության խնդիրը Արևմտյան բյուրոն հանձնարարում է ՀՅԴ Ամերիկայի Կենտրոնական կոմիտեին: Այդ մասին 1899 թ. մարտի 1-ին Կիլիկիո Պատասխանատու մարմնին հղած նամակում ՀՅԴ Ամերիկայի կոմիտեն խնդրում էր տեղեկություններ հաղորդել Կիլիկիայում կազմակերպական աշխատանքների, տեղական կազմակերպությունների գործունեության, առաջնահերթ կարիքների մասին, և «միանգամայն իմացնէք թէ միջոց ու դիւրութիւններ կա՞ն Կիլիկիա զէնք փոխադրելու համար»՝ նշելով, որ այդ նպատակի համար նախատեսում են տրամադրել 300 դոլար: «Զէնքին հետ մէկտեղ խումբ մըն ալ անձնուէր երիտասարդներ ունինք, որոնք կը բաղձան արեան դաշտ գնալ եւ գործել իբրեւ զինուոր»: Բայց երբ դրա փոխարեն Լեռնավայրի Պատասխանատու մարմինը խնդրում է ընդամենը մեկ գործիչ ուղարկել, ՀՅԴ Ամերիկայի 4-րդ պատգամավորական ժողովը (1899 թ. դեկտեմբերի 23-26) մերժում է՝ «պետք եղած անձնաւորութիւնը» չունենալու պատճառաբանությամբ[31]:

Աշխատանքներն ընթանում էին մեծ դժվարությամբ, հատկապես 1899 թ. հուլիսին Այնթապում Մարի ձերբակալությունից հետո (Մ. Վարանդյանի պնդմամբ՝ Վերակազմյալ հնչակյանների մատնությամբ)[32]: Մարի ձերբակալությամբ էր պայմանավորված նաև Կիլիկիո Պատասխանատու մարմնի՝ Ամերիկայից գործիչ ուղարկելու խնդրանքը: ՀՅԴ Լեռնավայրի Պատասխանատու մարմինը 1900 թ. ապրիլին Կիլիկիա է ուղարկում Ռահվերին (Միսաք Վարդանյան, հայտնի է նաև Շահվեր անունով): Նրա հետ Կիլիկիա էին անցել ՀՅԴ անդամներ Սարհատն ու Արամը: Ռահվերը, սկզբնական շրջանում հաստատվելով Այնթապում, «հիմը կը դնէ Հովիտի (Այնթապ) կազմակերպութեան եւ քանի մը տարի անընդհատ, կազմակերպչական շրջագայութիւններ կը կատարէ Կիլիկիոյ և մօտակայ վայրերուն մէջ»[33]: Այդ մասին Լեռնավայրի Պատասխանատու մարմնի տեղեկագրում նշվում է, որ «Ռահվեր… կը տեսակցի, նախկին ընկերներու հետ խզուած յարաբերութիւնը կը վերահաստատէ և կը հասնի Հովիտ (Այնթապի կուսակցական ծածկանունը - Ռ. Գ.): Հովտի մէջ միայն մի քանի ամիս անցընելէ ետք, յարաբերութեան (մէջ) կը մտնէ երկու ոչ կուսակցական յեղ(ափոխական) խմբերու հետ, որոնք փոխադարձ ծանօթութիւններէ եւ շփումներէ ետք կը համա-

---

[29] *Նույն տեղում, էջ 49:*

[30] *Նույն տեղում, էջ 64:*

[31] **Տօնապետեան Գ.**, *Հ. Յ. Դաշնակցութիւնը Հիւսիսային Ամերիկայի մէջ, հ. Ա (1895-1909), Պոսթոն, 1993, էջ 106:*

[32] **Վարանդեան Մ.**, *նշվ. աշխ., էջ 460:*

[33] **Տասնապետեան Հ.**, *նշվ. աշխ., էջ 332:*

ձայնին միանալ եւ գործել որպես Հայ Յեղ. Դաշնակցութեան անդամներ»[34]: Ծավալած աշխատանքների նպատակն էր, համաձայն Լեռնավայրի Պատասխանատու մարմնի՝ Ամերիկայի Կենտրոնական կոմիտեին գրած նամակի՝ «…ջանալ յեղափոխական մարմիններ յառաջացնել ի Կիլիկիա, կապեր հաստատել, քարոզչութիւն ընել ժողովրդին մէջ, զէնքերու փոխադրութեան եւ ամբարման միջոցներ ուսումնասիրել-պատրաստել ապստամբութեան»: Հրաչը 1900 թ. նոյեմբերի 24-ին Ս. Լևոնյանին հղած նամակում հաղորդում էր, որ որպես ապստամբական կենտրոններ են դիտարկվում Զեյթունը և Հաճընը և «երկրորդական «ամրոցներ» (իմա՝ ապստամբության կենտրոններ - Ռ. Գ.) Սուէտիան և Չոք Մարզուանը»: Հրաչը կարևորում էր զենքի և զինամթերքի ձեռքբերումը, որը կարելի էր Կիլիկիա փոխադրել Իզմիր-Կեսարիա գծով, քանզի Կիլիկիո նավահանգիստները խիստ հսկողության տակ էին: Ապագա ապստամբության հաջողության համար նա կարևոր էր համարում նաև Սուետիայում 300 զինյալ մարտիկների ափհանումը[35]:

Ռահվերը 1901 թ. անցնում է Խարբերդ, որտեղ տեղի է ունենում Լեռնավայրի առաջին շրջանային (Ռայոնական) ժողովը, որը դիմում է Դաշնակցության Կամքը Ներկայացնող Մարմնին և առաջարկում որպես Լեռնավայրի Պատասխանատու մարմնի կենտրոն հաստատել Խարբերդը: Դա հիմնավորվում է նրանով, որ Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան կապող օղակ հանդիսացող Խարբերդով ավելի դյուրին էր գործիչների մուտքը Կիլիկիա, դրամի առաքումը և այլն: Այդ հարցի կապակցությամբ, ամենայն հավանականությամբ, պայմանավորվածություն էր ձեռք բերվել ՀՅԴ Ամերիկայի կոմիտեի հետ, որը 1901 թ. հունվարի 17-ին Արևմտյան բյուրոյին ուղղված նամակում նշում էր. «Խարբերդի շրջանով աւելի դիւրին ու աւելի գործնական է դէպի Կիլիկիա երթալ ու կազմակերպութեան գործը առաջ տանիլ համաձայնելով Կիլիկիոյ Կեդր. Կոմիտէին հետ, քան թէ գործունէութեան ներկայ ճանապարհով»: Սակայն Արևմտյան բյուրոն մերժում է այդ առաջարկը այն հիմքով, որ Ընդհանուր ժողովը Խարբերդը չի ընտրել որպես ուժերի կենտրոնացման վայր[36]: Համաձայնելով Արևմտյան բյուրոյի հետ՝ ՀՅԴ Ամերիկայի կոմիտեն վերստին իր օժանդակության շրջան է հաստատում Կիլիկիան՝ ուղարկելով 100 անգլի ոսկի և 180 դոլար[37]: Սակայն, համաձայն Լեռնավայրի Պատասխանատու մարմնի տեղեկագրի, 1900 թ. մինչև 1901 թ. կեսերը Կիլիկիա էր մտել ընդամենը 30 ոսկի (ռուսական 300 ռուբլի) գումար: Ֆինանսական դրությունն այնքան ծանր էր, որ շրջանային ժողովից հետո Ռահվերը ճանապարհածախս չունենալու պատճառով երկար ժամանակ չէր կարողանում վերադառնալ: 1902 թ. կրկին անցնելով Կիլիկիա՝ նա շրջում է Այնթապում,

---

[34] *Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Ե, խմբագիր՝* **Երուանդ Փամպուքեան,** *Պեյրութ, 2007, էջ 181:*

[35] **Տասնապետեան Հ.**, *նշվ. աշխ., էջ 334:*

[36] **Տօնապետեան Գ.**, *նշվ. աշխ., էջ 129-131:*

[37] *Նույն տեղում, էջ 149:*

ապա լինում Արծվաբերդում և Սահմանաբերդում (Զեյթունի և Մարաշի կուսակցական ծածկանունները - Ռ. Գ.)[38]:

1901 թ. գարնանը Ֆիլիպեում Հրաչի մասնակցությամբ տեղի ունեցած Դաշնակցության Կամքը Ներկայացնող Մարմնի ժողովը կազմում է Լեռնավայրի նոր Պատասխանատու մարմինը՝ անդամությամբ Հրաչի, Բուլղարացի Պետոյի (Պետրոս Սերեմճյան), Աշոտ Երկաթի (Արմենակ Լևոնյան) և Մարտին Մուրադյանի: «Եվ-կարծէք ճակատագրական էր - գործը դարձեալ չքալեց»,- գրում էր Մ. Վարանդյանը: Կիլիկիա գնալու փոխարեն Բուլղարացի Պետոն միանում է մակեդոնացի հայդուկներին, կռվում նրանց հետ, ձերբակալվում և կախաղան բարձրացվում, իսկ Աշոտ Երկաթն անցնում է Արևմտյան Հայաստան, գործում իր հայրենի Ախլաթում և Սասունում: Նա իր մահկանացուն կնքում է 1904 թ.: Հարկ է նշել, որ Աշոտ Երկաթը միշտ խուսափել էր Կիլիկիայում գործելուց: Այսպես, 1899 թ. հոկտեմբերի 18-ին Մարտինին հղած նամակում վերջինս նշում էր, որ չի ցանկանում գործել Կիլիկիայում «ինչ ինչ պատճառներով, որոնց գլխաւորն է թէ Կիլիկիացիք բարքով ու վարքով խիստ շատ կը տարբերին Հայաստանի հայերէն եւ ես իրենց վարուց անտեղեակ՝ բաւական ատեն եւ ոչ մի գործ պիտի կրնամ տեսնել եւ թերեւս վնասակար ալ ըլլամ»[39]:

Ամերիկայում գտնվող Մարտինը (նա մինչ այդ գործել էր Կիպրոսում և Եգիպտոսում և 1899 թ. անցել Ամերիկա) երկար ժամանակ ձգձգում էր Կիլիկիա մեկնումը՝ հիմնավորելով, որ ֆինանսական լուրջ միջոցների բացակայության պատճառով անհնարին է գործն առաջ տանել անհրաժեշտ ուղղությամբ: Կարծես նրա մեկնումը Կիլիկիա արագացնելու համար հայտնի գրող Առանձարը (Միսաք Գույումճյան, հայտնի է նաև Կարիճ կուսակցական կեղծանունով) 1900 թ. սեպտեմբերի 28-ին գրված նամակում Կիլիկիայում իրենց անհաջողությունների պատճառ համարում էր գործիչների անտեղյակ լինելը երկրամասի վիճակին և պայմաններին, գործունեության սխալ մեթոդները և խորհուրդ էր տալիս գործել ոչ միայն Կիլիկիայում, այլև Կեսարիայում, քանզի վերջինս իր հայաբնակ գյուղերով կարող էր ապստամբության ժամանակ զգալի օգնություն տրամադրել Կիլիկիային[40]:

Ի վերջո, Մարտինը 1902 թ. վերջերին հաստատվում է Ալեքսանդրիայում և սկսում ծանոթանալ ընդհանուր իրադրությանը, գործերի վիճակին[41]: Միայնակ մնացած Հրաչը Լեռնավայրի համար բռնի հանգանակություն կատարելու նպատակով անցնում է Իզմիր, Էդուարդի (Սմբատ Պոյաճյան) հետ հիմնում ՀՅԴ Իզմիրի կոմիտեն, բայց որոշ ժամանակ անց (1903 թ. մարտին) ձերբակալվում է մեծահարուստ Պալեոզյանի սպանության մեղադրանքով: Նա ազատվում է երիտթուրքական հեղաշրջումից հետո՝ ստանձնելով «Ազատամարտ» թերթի վարչական պատասխանատվությունը: Պատասխանա-

---

[38] *Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Ե, էջ 182:*
[39] *Նույն տեղում, հ. Ա, էջ 48:*
[40] *Նույն տեղում, էջ 65:*
[41] *Նույն տեղում, էջ 48:*

տու մարմնի անդամ է ընտրվում նաև Ասլանը (Ռուբեն Զարդարյան), բայց նա ևս ինչ-ինչ պատճառներով չի կարողանում անցնել Կիլիկիա: «Ներսը կը մնար Ռահվեր, որ, մատնութեան սպառնալիքին տակ կերպով մը կը վարէր քարոզչութիւնը: Տեղական մարմնին հետզհետէ միացան Ա. Լևոն Սամուէլ և Կիլիկեան (Զաքարիա Մկրեան)»[42]: Կիլիկիայում էին գործում նաև Սիմոն Հակոբյանը, Վանա Սարգիսը (Պողոս Օտապաշյան): Սիսում, Հաճընում և Դյորթ-Յոլում գործիչ էր նշանակվել բնիկ սսեցի Պետրոս Աթմաճյանը:

1902 թ. Ալեքսանդրեթում տեղի ունեցած շրջանային ժողովը որոշում է առավել ուշադրություն դարձնել Զեյթունին և այլ քաջամարտիկ լեռնականների տրամադրությունը շոշափելու համար այնտեղ է ուղարկում Աշոտ Լևոն Սամուելին: Նույն ժամանակ Մարտինի առաջարկով Լեռնավայրի Պատասխանատու մարմնի կազմի մեջ են մտնում Վահրամը (Հարություն Գալֆայան), Առանձարը և Աղասերը (Հակոբ Գրիգորյան):

Աշոտ Լևոն Սամուելին էին հանձնարարվել նաև Չոք Մարզվանի (կուսակցական ծածկանունը՝ Բերդակ) կազմակերպական աշխատանքները: Լինելով տեղում և ծանոթանալով իրադրությանը՝ նա նշում էր, որ աշխատանքները հաջողությամբ պսակելու համար անհրաժեշտ է պատժել մատնիչներին: Բարձր գնահատելով տեղի հայերի մարտական ոգին և հաղթական անցյալը՝ Լևոն Սամուելը Պատասխանատու մարմնին հղած նամակում գրում էր. «Բերդակցիք կիներով եւ տղաներով կռուողներ են… Բերդակ իր անցեալով (Շահենի օրով) (նկատի ունի Մխո Շահենին, որը ղեկավարել էր դյորթյոլցիների 1895 թ. ինքնապաշտպանությունը - Ռ. Գ.) յայտնի է. այսօր կրկին իրենց տրամադրութիւնը ցոյց կու տան, կը պահան- ջեն զէնք, երկու կռուող ղեկավար, որոնք ձգող փախչողներ չըլ-լան. նաեւ մաս մը բաւականաչափ պաշար. մնացեալը՝ գործին միջոցին իրենց դրացի թուրքերէն կ՚առնեն»՝ առաջարկելով ապագա ապստամբության շրջանում անպայման ներառել նաև Չոք-Մարզվանը: Նույն կարծիքին էր նաև 1905-1906 թթ. Բերդակում գործող Թաթուլը[43]:

Իհարկե, Կիլիկիայից Արևմտյան բյուրո և ՀՅԴ տարբեր մարմիններ ստացված հաղորդագրությունների համաձայն՝ ամեն ինչ առավել քան լավ էր: Այսպես, Ամերիկայի Կենտրոնական կոմիտեին 1903 թ. գարնանը հղած տեղեկագրում նշվում էր, որ անխոնջ ջանքերի շնորհիվ ողջ շրջանը կազմակերպված էր, իրական երաշ-խիքներ կային կազմակերպական աշխատանքներ ծավալելու հարակից շրջաններում, և որ «մեր ընկերները ամէն կարգի միջոցներ ու դիւրութիւններ ապահոված են գալիք գործունեութեանց համար, եւ կրվայելեն տեղացիներու վստահութիւնը եւ աջակցութիւնը»[44]: Սակայն դա չէր համապատասխանում իրականությանը: Այս ոգևորիչ տվյալները ստուգելու համար էր նաև, որ ավելի ուշ ՀՅԴ երկու

[42] **Վարանդեան Մ.**, *նշվ. աշխ., էջ 460-461:*
[43] *Նիւթեր Հ.Յ.Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Ա, էջ 197:*
[44] **Տօնապետեան Գ.**, *նշվ. աշխ., էջ 178:*

երախտավորները՝ Սիմոն Զավարյանն ու Սարգիս Մեհրաբյանը, մեկնեցին Կիլիկիա՝ տեղում իրադրությանը ծանոթանալու և կուսակցությանը սպառիչ, հավաստի տեղեկատվություն հաղորդելու հանձնարարականով:

1903-1905 թթ. ՀՅԴ կառույցներ կային Հովիտում (Այնթապ), Դաշտում (Հալեպ), Խորշում (Մերսին), Արծվաբերդում (Զեյթուն): Կազմակերպական զգալի աշխատանքներ էր կատարել նաև Մարտին Մուրադյանը (Աշոտ Մարտին, Աշմար), որը 1904 թ. վերջերին կամ 1905 թ. ի վերջո անցել էր Կիլիկիա և կազմակերպել հերթական շրջանային ժողովը: Կուսակցական կազմակերպություններ էին գործում նաև Սահմանաբերդում (Մարաշ), Կարավանում (Ալեքսանդրեթ), Հեղեղատում (Սուեդիա): Այնթապը շարունակում էր մնալ որպես Լեռնավայրի արևելյան շրջանի կենտրոնը, որտեղ, ըստ Պատասխանատու մարմնի հաղորդման, ՀՅԴ անդամների թիվը հասնում էր մի քանի տասնյակի: 1906 թ. Այնթապի կոմիտեն բաղկացած էր վեց խմբից՝ հնգական անդամով[45]: Կապեր էին հաստատվել Ադանայի և Քիլիսի կազմակերպությունների հետ:

ՀՅԴ Մարաշի կոմիտեն բաղկացած էր շուրջ երկու տասնյակ անդամներից: Աչքի ընկնող գործիչներից էր քահանա Տեր Մարտիրոսը: Ադանայում (Խոր Վիրապ) շարունակում էր գործել «Բազե» կոմիտեն՝ «կազմուած տեղացի զարգացած եւ արհեստաւոր դասակարգերէն: Վերջերս ձեռնարկած է կոմիտէն մարտական խմբեր կազմելու, որոնց թիւը... կրնայ հասնիլ մինչև 200-ի»: Որքան էլ չափազանցված՝ այս ամենը վկայում է զգալի աշխատանքի մասին[46]:

1903 թ. փետրվարի 21-ին Արևմտյան բյուրոյին հղած տեղեկագրում Լեռնավայրի Պատասխանատու մարմինը նշում էր, որ դեռևս սաղմնային վիճակում են կազմակերպական աշխատանքները Հաճընում (Միջնաբերդ) և Սուեդիայում, բայց «Մենք շուտով ի վիճակի պիտի ըլլանք այդ ուղղութեամբ եւ նոր ուժերու փոխադրութեամբ մեր կապերը ամրացնել և զօրեղապէս հաստատուիլ այս կարեւոր վայրին մէջ»[47]: Ընդսմին, որպես ապագա ապստամբության կենտրոններ էին դիտարկվում Զեյթունը, Հաճընը և Սուեդիան: Ռահվերը, որպես ողջ Լեռնավայրի կենտրոն, առանձնացնում էր Այնթապը՝ «յարաբերական, վաճառականական եւ զինուորական տեսակէտներով»: Ըստ Ռահվերի՝ ապաստամբության ժամանակ Զեյթունը կարող էր տրամադրել 3000-4000, Հաճընը՝ 5000-6000, Սուեդիան՝ 1000-1500, Այնթապը՝ 4500 զինվոր[48]:

Սակայն ավելի ուշ Ընդհանուր ժողովին գրած տեղեկագրում Սիմոն Զավարյանը ոչ միայն համակարծիք չէր Ռահվերի լավատեսական պնդումներին, այլև և՛ Ռահվերի, և՛ Աշոտ Լևոնի աշխատանքները գնահատում էր անբավարար: Պատահական չէր, որ չնայած Կիլիկիո Պատասխանատու մարմնի ոգևորիչ հաղորդումներին, Սոֆիայում կայացած ՀՅԴ 3-րդ ընդհանուր ժողովը (1904 թ.), անդրա-

---

[45] *Նիթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Ե, էջ 217:*
[46] *Նույն տեղում, էջ 183:*
[47] *Նույն տեղում, էջ 184-188:*
[48] *Նույն տեղում, էջ 191-194:*

դառնալով Լեռնավայրի խնդիրներին, արձանագրել է. «Կիլիկիոյ մարմնին տուած տեղեկութիւններէն երեւցաւ, որ Դաշնակցութիւնը անկարող է տրուած ժամանակամիջոցին մէջ որեւէ շարժում առաջ բերել այնտեղ որ լուրջ հանգամանք մը կարենայ ստանալ: Իսկ հապճեպ պատրաստութեամբ ժողովուրդը ապստամբեցնել շատ դժուար եւ աննպատակայարմար էր, որովհետեւ նախ Կիլիկիոյ ժողովուրդը՝ մասնաւորապէս Զեյթունը՝ անցեալի մէջ խաբուած ըլլալով չպիտի համաձայնէր ոտքի ելլել առանց լուրջ պատրաստութեան, եւ երկրորդ՝ հապճեպ պատրաստութեամբ մը Կիլիկիան ա-պըստամբեցնելով՝ մենք կը կորսնցնենք լաւ ապստամբավայր մը, որ ա-պագային կրնայ, նոյնիսկ եթէ Բարձրաւանդակը (Սասունը - Ռ. Գ.) ընկճուի, մեր ամէնէն ամուր կռուանը ըլլալ»[49]: Ամեն դեպքում, առաջնայինը վերստին համարվում էր ապստամբության բարձրացումը Սասունում, իսկ Լեռնավայրի խնդիրն էր «զեյթունեան շարժում մը, որ արձագանք տայ Սասնոյ կռիւներուն: Ընդունելով հան-դերձ այս նպատակը՝ ժողովը որոշեց այս մասին չպարտաւորեցնել Կիլիկիոյ Պատասխանատու մարմինը»[50]:

Ընդհանրապես, իրենց ձեռնարկներում հաջողության հասնելու համար ՀՅԴ գործիչները իրավամբ մեծ նշանակություն էին տալիս Զեյթունին՝ վստահ քաջամարտիկ լեռնականների կորովին, խիզախությանը, մարտական փորձին և հաղթանակի հավատին: Հրաչ Թիրաքյանին հղած նամակում Ռահվերը գրում էր, որ զեյթունցիները «այնքան ինքնավստահ են, որ կը կարծեն թէ ի յարկին պատառ մ՝ուտելու չափ դիւրաւ պիտի կրնան զօրանոցը և մէջի բնակիչները ոչնչացնել»[51]:

Սիմոն Զավարյանը (Սմբատ Օհանյան) և Վարդանը (Սարգիս Մեհրաբյան) 1905 թ. գարնանը գրված իրենց տեղեկագրում, մեծ տեղ հատկացնելով Զեյթունին, կարծում էին, որ նոր բռնկումից առաջ անհրաժեշտ են լուրջ պատրաստություններ, առանց որոնց «կարող են տաղուել եւ Սասնոյ վիճակին հասնել»: Նրանք կարևորում էին նաև Հաճընը, նշելով, որ միայն այդ դեպքում, ընդհանուր ապստամբության, Սսի և Ադանայի հայության ընդվզման պարագայում է հնարավոր հասնել որոշ հաջողությունների և «նոյնիսկ գրաւել որոշ վայրեր»[52]:

Ընդհանուր ժողովը որոշում է 20.000 ֆրանկ տրամադրել Լեռնավայրի կարիքների համար: Սակայն այդ գումարները միշտ չէ, որ ծառայում էին իրենց նպատակին: Ինչպես իրենց տեղեկագրում գրել են Ս. Զավարյանն ու Վարդանը՝ «Մեր տասնեակ հազար ծախսած գումարների 9/10 մասը գնացած է «գործիչների» աղայական ապ-րուստի, ճանապարհորդութեան վերայ, ան էլ դուրսը կամ ծովեզերեայ հայազուրկ քաղաքներում»: Որպես օրինակ՝ նրանք բերում են Ռահվերին և Աշոտ Լևոն Սամուելին, որոնք կենցաղային ծախսերը

[49] **Տասնապետեան Հ.**, *նշվ. աշխ., էջ 335:*
[50] *Նիթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Բ, էջ 412:*
[51] *Նույն տեղում, հ. Ե, էջ 201:*
[52] *Նույն տեղում, էջ 208:*

ցույց էին տվել 7 ոսկի (150 ֆրանկ), մինչդեռ իրականում դրանք 1-2 ոսկուց ավելի չէին[53]:

Ընդհանուր ժողովն ընտրում է Լեռնավայրի Պատասխանատու մարմնի նոր կազմ՝ անդամությամբ Սիմոն Զավարյանի, Առանձարի, Վարդանի և Հակոբ Աղասերի: Համաձայն Ընդհանուր ժողովի որոշման՝ Կիլիկիան ուսումնասիրելու, տիրող մթնոլորտին ծանոթանալու, աշխատանքները կազմակերպելու հանձնարարականով Լեռնավայր են անցնում Սիմոն Զավարյանը և Խանասորի Վարդանը: 1936-1937 թթ. գրած իր հուշերում Վարդանը նշում է, որ Ս. Զավարյանը Կիլիկիա մուտք գործելուց առաջ Բեյրութում խորհրդակցություն էր հրավիրել՝ Լեռնավայրի առջև ծառացած խնդիրները քննարկելու և համապատասխան լուծումներ տալու համար: Խոր-հրդակցության մասնակիցները Ս. Զավարյանին համոզում են զենք գնելու անհրաժեշտության մեջ: Այդ հանձնարարականով Ժնևում էր «այնտեղի ընկերներից մէկը - Սահրատը, որին դոկտոր էին անվանում»: Սակայն Վարդանը կտրականապես դեմ է արտահայտվում զենքի ձեռքբերման և փոխադրման հարցում՝ առաջարկելով տեղում ծանոթանալ իրադրությանը, համոզվել աշխատանքների կազմակերպման բավարար մակարդակի մեջ, ապա դիմել գործնական քայլերի: Այնինչ Ժնևի «ընկերները ինձ հակառակեցին, թէ մենք իրաւունք չունինք մեր ընկերներու որոշումը չյարգելու, լավ չէ, վիրավորական է և այլն»[54]:

Զենք ձեռք բերելու համար Վարդանը, Արշակ Վռամյանը և Ռոստոմը (Ստեփան Զորյան) 1904 թ. հոկտեմբերի 20-ին մեկնում են Փարիզ, սակայն, չհաջողելով իրենց առաքելության մեջ, որոշում են զենք գնել Հունաստանում: Կիլիկիա անցնելու ճանապարհին Վարդանը և Սահրատը Աթենքի Պիրեյ նավահանգստում գնում են 100 հրացան, մի քանի հազար փամփուշտ, ի պահ թողնելով հույն վաճառականի մոտ՝ «ի հարկէ նրանից ստացական վերցնելով, որպէսզի նա պահէ այնքան ժամանակ, մինչեւ որ մենք յարմարութիւն ունենանք Տաճկաստան փոխադրելու»[55]: Ավելի ուշ, չկարողանալով կազմակերպել փոխադրությունը, զենքերը վաճառում են: Սահրատին թողնելով Հունաստանում (որտեղ էր նաև Մարտինը)՝ Վարդանը, որպես պարսկահպատակ ասորի գորգավաճառ (Յուխաննա Յաղուբ անունով), անցնում է Բեյրութ և Հալեպի վրայով մտնում Քիլիս, հետո Այնթապ՝ հաստատվելով ՀՅԴ անդամ երզնկացի Ավոյի (Խաչատուր Պետրոսյան) տանը: Ցավոք, կարճ ժամանակ անց Վարդանը համոզվում է, որ կազմակերպական աշխատանքները խիստ ցածր մակարդակի վրա էին, եթե չասենք անբավարար վիճակում: Ինչպես գրում էր Վարդանը, Ավոն պարապ մարդ էր, ոչնչով չէր զբաղվում և «ապրում էր կազմակերպութեան փողով: Մի քանի ընկերներ կային, որոնք իրենցից ոչինչ չէին ներկայացնում»[56]: «Փորձելու համար թէ ինչքան ձեռնհաս են իրենց որոշումների մէջ,- հիշում է

[53] Նույն տեղում, էջ 209:
[54] ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 18:
[55] Նույն տեղում, թ. 19:
[56] Նույն տեղում, թ. 28:

Վարդանը,- մի օր երեկոյան յայտնեցի, թէ զէնքերի մի մասը եկել է և գտնվում է Այնթապի մոտի գերեզմանատանը, հարկաւոր է այնտեղից փոխադրել քաղաք, բոլորն էլ շշված մնացին և ոչ մէկ կարողացավ մի ոնէ քայլ առնել այդ ուղղութեամբ: Այդտեղ արդեն տեղն էր բոլորին պախարակել, ամաչեցնել, ցոյց տալ իրենց անգործնական և անպատրաստի լինելը»[57]: Այո, իրավացի էր Արևմտյան բյուրոն, երբ խիստ թերահավատորեն էր ընդունում Լեռնավայրի Պատասխանատու մարմնի ոգևորիչ տեղեկագրերը: Փաստերը վկայում էին, որ Կիլիկիան, ըստ էության, անպատրաստ էր պայքարի: Այդ ամենից հուսախաբ՝ Վարդանը գրում էր. «Կիլիկիայի մասին մեծ կարծիք ունեի, բայց այդ քիչ տեղը պտտելով, տեսնելով, ծանոթանալով, միանգամայն հիասթափվեցի»[58]:

Ամեն դեպքում, Վիեննայի 4-րդ ընդհանուր ժողովին հասցեագրված իր զեկուցագրում, որը «պիտի ըլլար շատ յոռետես»[59], ըստ Վարդանի՝ գործունեության տեսակետից Կիլիկիան «իրենից մեծ յարմարութիւններ է ներկայացնում, որպես ծովեզերքին ընկած երկիր», ուստի կուսակցական ամուր կառույցների առկայության և եռանդուն աշխատանքի շնորհիվ առավել, քան Արևմտյան Հայաստանում, հնարավոր էր գրավել մեծ տերությունների ուշադրությունը և ակնկալել միջամտություն: «Այնտեղ մի հրացանի պայթիւնը ավելի է լսելի ու ուշադրութեան արժանի, քան Հայաստանի այնքան հերոսական խորքերը, որոնք անյայտութեան մէջ կորչում էին»[60]:

Սիմոն Զավարյանը, ի տարբերություն Վարդանի, շրջում է համարյա ողջ Կիլիկիայում (Սուետիա, Քեսապ, Ադանա, Այնթապ և այլն)՝ ընդարձակ, հանգամանալից և փաստերի վրա հիմնված տեղեկագիր պատրաստելով ընդհանուր վիճակի մասին: Այդ տեղեկագիրը Հր. Տասնապետյանը բնութագրում է որպես «մանրամասն ու իրապաշտ, Կիլիկիոյ աշխարահագրական, ռազմագիտական, ազգագրական-դաւանական եւ կուսակցական-յեղափոխական վիճակին ու կարելիութիւններուն խոր վերլուծումովը»[61]: Ս. Զավարյանն առանձնահատուկ նշանակություն էր տալիս Կիլիկիայում ապստամբական շարժումներին, որոնց հետ էր կապում Եվրոպայի միջամտության հույսը, քանզի եվրոպական տերություններն այնտեղ «ահագին տնտեսական և կուլտուրական շահեր ունին», հետևաբար շահագրգռված են երկրամասում խաղաղության և կայունության պահպանմամբ, որի շնորհիվ Կիլիկիայում կհաստատվի «եւրոպական կոնտրոլ»[62]: Ցավալին այն էր, որ, ինչպես հիմնավորում էր Ս. Զավարյանը, երկրամասի հայության մեծամասնությունը հեռու էր հեղափոխական, ազատագրական պայքարի գաղափարներից: «Թոյլ է ազգային գիտակցութիւնը Կիլիկիոյ հայութեան մէջ,- գրում էր նա,- աւելի եւս թոյլ է յեղափոխական գիտակցութիւնը... Ամէն մէկը

[57] *Նույն տեղում:*
[58] *Նույն տեղում, էջ 29:*
[59] **Տասնապետեան Հ.**, *նշվ. աշխ., էջ 336:*
[60] *ՀԱԱ, ֆ. 402, ց. 2, գ. 1, թ. 33:*
[61] **Տասնապետեան Հ.**, *նշվ. աշխ., էջ 337:*
[62] **Վարանդեան Մ.**, *նշվ. աշխ., էջ 467:*

խլուրդի նման մտած է իր բոյնը, չի տեսնում լոյս աշխարհ, չի բացւում եղբօրն իսկ»: Նշելով, որ շատ քչերն են զինված և «ան ալ գրեթէ միայն չիֆթաներով ու շէշխանաներով», Ս. Զավարյանը եզրակացնում էր, որ բացի Զեյթունի, Դյորթ-Յոլի և Քեսապի հայերից, քչերն են պատրաստ պայքարի: «Գործը յաջողութեամբ պսակելու (ապստամբություն կազմակերպելու - Ռ. Գ.) համար պահանջւում է դեռ եւս շատ ու շատ աշխատանք, գուցէ նոյնքան ուժեր, որքան մենք տուած ենք Վասպուրականին կամ Սասուն-Մշոյ դաշտին»[63]:

Ապստամբության կազմակերպման աշխատանքները բարդանում էին, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ «տերութիւնը արթնացած է», ավելի զգոն, քան տասը տարի առաջ՝ ապստամբության բռնկման բոլոր հավանական բնակավայրերում թափով ծավալվելու համար «տեղի ուժերը խիստ սակաւ են, դրսի աշխարհից քիչ բան գիտցող, անփորձ եւ «զոհաբերութեան» մասին մութ գաղափարներ ունեցող»[64]:

Այդ մասին է վկայում նաև Մարտինի՝ 1905 թ. Ամերիկայի Կենտրոնական կոմիտեին ուղղված նամակը, ըստ որի՝ Կիլիկիա ուղարկված գործիչները տեղական պայմաններին և խնդիրներին անծանոթ լինելու պատճառով ոչ միայն «օգտակար չէն կրցած ըլլալ, այլեւ, պատճառ եղած են դրամներու անօգուտ վատնումին եւ տեղացի ոյժերուն երեսի վրայ մնալուն»[65] և առաջարկում է որպես գործիչ ուղարկել այդ ժամանակ Բուլղարիայում գտնվող Էդվարդին, սակայն, ըստ Արևմտյան բյուրոյի, նպատակահարմար չէր նրա անցումը Կիլիկիա: ՀՅԴ ղեկավարներն այդ տարիներին կարևորում էին «տեղական կարեւոր եւ ազդեցիկ անձնաւորութիւններու վստահութիւն ներշնչելով զանոնք գործի կապելը»[66]: ՀՅԴ Արևմտյան բյուրոն միաժամանակ նախապատրաստում էր մի խումբ դաշնակցականների անցումը Կիլիկիա՝ այնտեղ աշխատանքները կազմակերպելու, գործերին նոր շունչ և ոգի տալու համար: Հայկական «ագիտատորների» գործունեության աշխուժացման մասին էր խոսում Հալեպում ռուսական գլխավոր հյուպատոս Ա. Կրուգլովը Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության առաջին դեպարտամենտի տնօրենին 1905 թ. դեկտեմբերի 21-ին հղած հաղորդագրությունում, նշելով, որ հայ հեղափոխականները Կիպրոսից Անտիոքի վրայով զգալի գումար են տեղափոխել Կիլիկիա, իսկ դեկտեմբերին Ալեքսանդրեթում ձերբակալվել է 11 հոգի, որոնցից 6-ը անգլիական հյուպատոսի միջամտությամբ փրկվել են բանտարկությունից[67]:

Լեռնավայրի և Արևմտյան բյուրոյի միջև կապը 1904-1906 թթ. իրականացվում էր Ալեքսանդրիայում գտնվող Թափառիկի՝ բժիշկ Կարապետ Փաշայանի միջոցով: Հարկ է նշել, որ այդ տարիներին

---

[63] *Նույն տեղում, էջ 462-463: Տե՛ս նաև Նիթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Ե, էջ 209:*

[64] *Նիթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Ե, էջ 211-212:*

[65] **Տօնապետեան Գ.**, *նշվ. աշխ., էջ 385:*

[66] *Նիթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Ե, էջ 190:*

[67] *Архив внешней политики Российской империи, ф. Политархив, Азиатский департамент, г. 1900, д. 42, л. 3.*

գործերը ոչ այնքան բարվոք վիճակում էին: ՀՅԴ Ամերիկայի կոմիտեն 1905 թ. հունվարին Արևելյան և Արևմտյան բյուրոներին, Կիլիկիո Պատասխանատու մարմնին ուղղված շրջաբերական նամակում ցավով նշում էր «կազմակերպութեան անգործութեան եւ երկրի գործերուն հանդէպ ցոյց տրուած անտարբերությանը մասին: Ոչ կանոնաւոր թղթակցութիւն պահուած է անոնց հետ եւ ոչ ալ գոհացում տրուած է անոնց պահանջներուն: Կիլիկիայի տեղեկագիրը, որ նոր ստացած ենք, տխուր իրողութիւններ կը պարզէ մեր առջեւ»[68]:

Ամերիկայի կոմիտեին ուղղված նամակում (1906 թ. հունիսի 29) Արևմտյան բյուրոն խոստովանում էր, որ Լեռնավայրի Պատասխանատու մարմինը փաստորեն գոյություն չունի՝ շրջանից անդամների հեռացած լինելու պատճառով[69]:

Դարասկզբին Կիլիկիայում ազատագրական շարժման պայծառ դեմքերից էր հեղափոխական պայքարի նշանակալի ուղի անցած Ժիրայրը (Կարապետ Մխճյան, ծնված Կիլիկիայի Կոկիսոն գյուղում 1869 թ.): Նա Մուրադի հետ անցել էր Կովկաս (1895 թ.), անդամագրվել Դաշնակցությանը և 1896 թ. դեկտեմբերի 18-ին մշեցի Պետոյի (Ալեքսանդր Պետրոսյան) «Զինակիր» խմբի կազմում անցել էր «Երկիր», որտեղ և ստացել էր մարտական մկրտությունը: Նրան և Սեբաստացի Մուրադին (Մուրադ Խրիմյան) էր հանձնված ՀՅԴ Կարսի զինապահեստների հսկողությունը: Լինելով կիլիկիացի՝ Ժիրայրը ցանկանում էր գործել հայրենիքում: Նրա համոզմամբ թուրքական տիրապետությունը թոթափելու միակ միջոցը համաժողովրդական պայքարն է: Ըստ նրա՝ Կիլիկիայում այն պետք է սկսվեր Զեյթունից, որտեղ դրա համար պարարտ հող կար: Եվ իրոք, եթե Արևմտյան Հայաստանում ազատագրական պայքարի կենտրոնը Դուրան-Բարձրավանդակն էր (Մուշ-Սասուն, Տարոն), ապա կիլիկիահայության ազատամարտի միջնաբերդը Զեյթունն էր, որը կարող էր դառնալ երկրամասի դիմադրական, ապստամբական շարժման կենտրոնը: Զեյթունի նշանակությունը կիլիկիահայության ազատագրական պայքարում հիանալի գիտակցում էին և թուրք իշխանավորները: Աննկուն լեռնականներին կոտրելու համար նրանք բազմաթիվ ճնշումներ էին գործադրում՝ հարուցելով հայության ընդվզումները: Հայտնի է, որ չդիմանալով բռնություններին, մի խումբ զեյթունցիներ 1904-1905 թթ. արտագաղթել էին Արևելյան Հայաստան և իրենց ծանր վիճակի վրա հրավիրել Ամենայն հայոց կաթողիկոս Մ. Խրիմյանի ուշադրությունը՝ դրամական օժանդակություն խընդրելով: Իրադրությունը բնութագրող է հետևյալ փաստը. 1907 թ. մարտի 15-ին զեյթունցիները, որպես բողոքի նշան, թռուցիկ են փակցնում գավառապետարանի դռանը. «Տուրք գանձելու պատրվակին տակ ժողովուրդը կը նեղեք, սանձարձակ կը գործեք, անդրադարձեք 1895-96-ի ապստամբութեան, որն այնքան ծանր նստաւ կառավարութեան վրայ. ձեր նախորդներու անհեռատեսութիւնը պետք էր զգուշացնել ձեզի, այս անգամ առաջին զոհերը դուք պիտի

[68] **Տօնապետեան Գ.**, *նշվ. աշխ., էջ 306:*
[69] *Նույն տեղում, էջ 429:*

ըլլաք, հանգիստ թողուցեք անօթի ժողովուրդը, որ իւր ընտանիքին օրական հացին վրա կը խորհի»[70]:

Ժիրայրն անհրաժեշտ էր համարում ինքնապաշտպանական խմբերի կազմակերպումը, որի նպատակը հայաբնակ շրջանների անվտանգության ապահովումն էր թուրք և քուրդ ավարառուներից, ժողովրդին մարտական ոգու ներարկումը: Ժիրայրի հայրենանվեր գործունեությունը, ցավոք, անավարտ է մնում: Նա 1906 թ. ձերբակալվում է և ազատվում 1908 թ. երիտթուրքական կեղծ սահմանադրության հռչակումից հետո: Իր մահկանացուն նա կնքում է 1909 թ. ապրիլին՝ Ադանայի կոտորածների ժամանակ, հերոսաբար մաքառելով թշնամիների դեմ[71]:

Ամեն դեպքում, ՀՅԴ-ին, չնայած գործադրած ջանքերին, չէր հաջողվել Կիլիկիայում ստեղծել կուսակցական կազմակերպությունների լայն ու կուռ ցանց, տարածել իր գաղափարական ազդեցությունը: Արձանագրելով այդ իրողությունը և հիմք ընդունելով Ս. Զավարյանի զեկուցումը Լեռնավայրում տիրող իրավիճակի և մթնոլորտի մասին՝ ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովը (Վիեննա, 1907 թ.) երկար քննարկումներից հետո, այնուամենայնիվ, որոշեց շարունակել աշխատանքները Կիլիկիայում արդեն իսկ գոյություն ունեցող կառույցների ամրապնդման և նորերի ստեղծման ուղղությամբ՝ վերստին կարևորելով փորձված և բանիմաց գործիչների առաքումը երկրամաս և որոշակի գումարի (20 000 ֆրանկ, ինչպես առաջարկել էր Եղիշե Թոփչյանը) տրամադրումը[72]: Սակայն չկար նախկին ոգևորությունը և հավատը երկրամասում ազատագրական շարժումների ծավալման, ապստամբության կազմակերպման նկատմամբ: Կարծես կանխազգալով այդ ամենը՝ Մարը Ժնևից 1907 թ. փետրվարի 18-ին Ընդհանուր ժողովին հղած նամակում գրում էր, որ «բարձի թողի չպէտք է անել Լեռնավայրը, որ իր անցեալով, իր դիրքով, հայ ժողովրդի բաւական հոծ բնակչութեամբ եւ ծովին մօտ գտնուելովը մէկից աւելի յարմարութիւններ է ներկայացնում շարունակել լինել ուշադրութեան առարկայ»[73]: Սակայն այն հանգամանքը, որ ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովը չի ընտրում Լեռնավայրի Պատասխանատու մարմին և «զէթ նախատեսելի ապագային համար, 10-12 տարուան հետեւողական բայց ոչ բաւարար չափով արդիւնավէտ ճիգերէ ետք, Հ. Յ. Դաշնակցութիւնը կը դադարի Կիլիկիան ուժերու կեդրոնացման շրջան և ապստամբավայր նկատելէ»[74], փաստորեն, նշանակում էր հրաժարում նախկին ծրագրերից: Դրա պատճառը և՛ ֆինանսական, նյութական անբավարար միջոցներն էին, և՛ Կիլիկիայի՝ Արևմտյան Հայաստանից կտրված լինելը, և՛ գործիչների պակասը, և այն, որ կուսակցությունը, ցավոք, չուներ այն ներուժը, որ ի զո-

---

[70] *Զէյթունի պատմագիրք, Բուէնոս-Այրէս, 1960, էջ 644:*

[71] **Բյուրատ Սմբատ**, *Արիւնի ճամփուն վրա, Կ. Պոլիս, 1911, էջ 267:*

[72] *Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Գ, հրատարակութեան պատրաստեց եւ խմբագրեց* **Հրաչ Տասնապետեան**, *Լիբանան, ա.թ., էջ 233:*

[73] *Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Ե, էջ 362:*

[74] **Տասնապետեան Հ.**, *նշվ. աշխ., էջ 337:*

րու լիներ բոլոր ճակատներում գործել նույն թափով, ծավալով և ուժգնությամբ:

Լեռնավայրի գործը (1907 թ.) վարում էին Ալեքսանդրիայում գտնվող Հանգույցը (Նիկոլ Աղբալյան), Մինաս Խաչատրյանը և Շահբազը, սակայն նրանց աշխատանքը հիմնականում սահմանափակվում էր Կիլիկիայի՝ արտաքին աշխարհի և ՀՅԴ կառույցների հետ կապի ապահովմամբ[75]: Գործերն աշխուժացնելու և կազմակերպված հունի մեջ դնելու համար Հանգույցը մի շարք աշխատանքներ էր ծրագրել, սակայն «Ուշ էր արդէն, տարաբախտաբար, Կիլիկիոյ ազատագրութեան համար նոր ծրագիրներ յօրինելու համար: Տարի մը յետոյ եկաւ «Հուրիէթ»-ը և այդ բոլոր որոշումները ջուրը ընկան»[76]:

ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНСКОЙ РЕВОЛЮЦИОННОЙ ПАРТИИ ДАШНАКЦУТЮН В КИЛИКИИ В КОНЦЕ XIX - НАЧАЛЕ XX ВЕКОВ

ГАСПАРЯН Р. А.

Резюме

Армянские народные партии появились на исторической арене в конце XIX в. Помимо различных факторов их появление было обусловлено также усилением захватнической и антиармянской политики турецкого правительства, угрозой физического истребления армянского народа, что побудило армян встать на путь освободительноей борьбы. Не надеясь на помощь крупных держав, армянская общественность приняла решение перейти к силовым мерам. В результате зародилась идея создания народных партий.

Свои первые шаги по созданию партийных учреждений в Киликийском царстве и распространению своего идеологического влияния дашнаки предприняли в середине 90-ых годов XIX в., со дня начала Зейтунского восстания. Киликия стала эпицентром восстания и средоточения освободительных сил. Был учрежден специальный орган, несущий прямую ответственность за руководство освободительным движением и разработку тактического плана. Несмотря на предпринятые усилия члены Армянской революционной партии Дашнакцутюн не смогли создать сеть партийных организаций с целью расширения идеологической борьбы. Причиной тому стал ряд факторов: нехватка партийных деятелей, финансовых средств, изолированность Киликии от Западной Армении и т. д.

---

[75] *Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Ե, էջ 254:*

[76] **Վարանդեան Մ.**, *նշվ. աշխ., էջ 468:*